Եվ նա կատարեց իր խոստումը, իր երգերի հազար կյանքն էլ նվիրաբերեց մի միակ սիրուն՝ իր հավերժ Հայաստանին:

Այս տողերը Ավետիք Իսահակյանը գրել է 1926 թվականին, երբ առաջին անգամ եկավ հարազատ Հայաստան, որտեղ աշխատավորը իենն էր դարձել իր սուրբ աշխատանքի և իր ազնիվ հացի տերը:

Ինձ համար առանձնապես հաճելի է վերհիշել, այնուհետև նշեց հոտորը, որ իմ քաղաքում, Նևայի վրա, համաշխարհային պատմության մեծ իրադարձությունների նախօրեին Ռուսաստանի հանճարեղ բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը այնքան, ես կասեի, սրբազան սիրով էր բարգմանում իր գրչեղբայր Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները, դրանք առաջինը հաղորդակից դարձնելով համաշխարհային մշակույթին: Քաղաքացիական սիրանք կարելի է անվանել նաև այն փաստը, որ մի ուրիշ ռուս նշանավոր բանաստեղծ՝ Վալերի Բրյուսովը, այդ նույն՝ 1916 թվականին լույս ընծայեց հայկական պոեզիայի անթոլոգիա և դրանով բացահայտեց ու աշխարհին ցույց տվեց հայ ժողովրդի գեղեցիկ հոգին:

«Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների գեղեցիկ բարգմանության մեջ ապրում է իսկական մեծ պոեզիայի ոգին: Այդ բանաստեղծությունների երաժշտությունը զարմանահրաշ է»: Այս նշմարիտ խոսքերը պատկանում են պոեզիաների եղբայրության հետևողական պրոպագանդիստ, հրաշալի ռուս բանաստեղծ Նիկոլայ Տիխոնովին, որն Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների բարգմանիչներից մեկն է: Եվ այդ խոսքերին չի կարելի չհամաձայնել:

Եվ ես, առաջին անգամ բարգմանելով Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունները ռուսերեն, ասես առնչվեցի հայ ժողովրդի ոգու բուն էության հետ: Եվ այդ հանդիպումները դեպի պոեզիայի հոգևոր աշխարհի խորքերը տոն էր ինձ համար:

* * *

Այնուհետև Հայկական ՍՍՀ-ի և Մոսկվայի արվեստի վարպետների ուժերով տրվեց հոխ համերգ: Մեծ թատրոնի կամարների տակ հրնչում էր մեծ բանաստեղծի և քաղաքացու՝ Ավետիք Իսահակյանի անմահ խոսքը:

Մ. ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԱՅԱ,
Ի. ՎԻԿՍԼԵՐ
Պ. ԿՈՍՈԼԱՊՈՎ
(ԱՐՄԵՆՊՐԵՍ-ի հատուկ լրագրակիցներ)

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ
ՆՎԻՐՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 20—21-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին:

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

— Մենք այսօր սիրով ու հարգանքով ենք նշում Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակը,— ասաց նա:— Մեծանուն բանաստեղծը իր գործերով ընդմիշտ մնացել է մեր սրտերում և այսօր բոլորիս համար մեծ պատիվ է ներկայինել նրա հոբելյանին նվիրված այս միջոցառմանը: Իսահակյանը զգացմունքի մեծ երգիչ է: Նա իր երկերում ամենապարզ ու ամենասրտամոտ ձևով արտահայտել է իր ժողովրդի զգացմունքները: Նա նաև բանականության երգիչ է, որն իր բանաստեղծություններում բողոքի ձայնն է բարձրացնում ընդդեմ սոցիալական անարդարությունների: Իսահակյանը շատ բան է արել նաև սովետական բազմազգ կուլտուրայի զարգացման համար: Նա իսկական սովետական մեծ քաղաքացի է, որի պոեզիան ու գաղափարները մոտ ու հարազատ են նաև մեր երկրի մյուս ժողովուրդներին: Եվ պատահական չէ, որ այսօր մեզ հետ հայ ժողովրդի մեծ զավակի հոբելյանը սիրով ու հարգանքով են նշում սովետական եղբայր ժողովուրդները:

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ Ա. Ղանալանյանը («Ժողովրդական ավանդությունների իսահակյանական մշակումները») և Է. Ջրբաշյանը («Աբու-լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները»), բանասիրական գիտությունների դոկտորներ Ս. Աղաբաբյանը («Իսահակյանը և արդիականությունը»), Վ. Առաքելյանը («Իսահակյանի լեզվի և ոճի առանձնահատկությունները»), արվեստագիտության դոկտոր Մ. Մուրադյանը («Ավետիք Իսահակյանի պոեզիան երաժշտության մեջ»), բանասիրական գիտությունների թեկնածուներ Վ. Մնացականյանը («Մեծ բանաստեղծն ու քաղաքացին»), Ե. Այնբանդյանը («Համաշխարհային և ռուսական գեղարվեստական ավանդույթները Իսահակյանի արվեստում»), Ա. Զաքարյանը

(«Իսահակյանը բնության երգիչ»), Ա. Եղիազարյանը («Իսահակյանի բառի պոետիկան»), Ս. Ամիրյանը («Իսահակյանը և Ուկրաինան»)։

Նստաշրջանում էլույթներ ունեցան նաև վրաց գրականագետ Ռ. Արվելաձեն և բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Սեյիդովը (Բարու), որոնք խոսեցին Վրաստանում և Ադրբեջանում Իսահակյանի արվեստի մասսայականության, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով կատարված նրա ստեղծագործությունների թարգմանությունների, ինչպես նաև վրացական և ադրբեջանական գրականությունների հետ Իսահակյանի ունեցած կապերի մասին։

* * *

Հոկտեմբերի 14—16-ը Երևանի պետական համալսարանում կայացավ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

— Հայ ժողովուրդը,— ասաց նա,— մեր մեծ հայրենիքի եղբայրական ժողովուրդների և ամբողջ աշխարհի բարի կամքի տեր մարդկանց հետ տոնում է իր հոգևոր մշակույթի նշանավոր տոներից մեկը՝ անմահ Իսահակյանի ծննդյան 100-ամյակը։ Հանճարեղ բանաստեղծը հայ բազմադարյան գրականության փայլուն գագաթներից մեկն է։ Հսկայական է նրա դերը հայ նոր գրականության զարգացման գործում։ Իսահակյանն իր կյանքով ու գործունեությամբ ներկայանում է որպես բաղարացիական ոգու մեծության, ազնվության և վեհության մի պայծառ օրինակ։ նա գեղարվեստորեն մարմնավորեց իր ժողովրդի հոգևոր աշխարհը, նրա իղձերն ու ձգտումները, մարդասիրական խոհերը։

Իսահակյանի ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանը։

— XIX դարի վերջում և XX դարի սկզբում հայ պոեզիան զարգացման մի աննախընթաց շրջան ապրեց,— ասաց նա։— Այդ ժամանակամիջոցում իրենց ստեղծագործությամբ հրաշակվեցին ու լայն ժողովրդականություն ձեռք բերեցին Թումանյանը և Իսահակյանը, Սիամանթոն ու Վարուժանը, Մեծարենցն ու Տերյանը։ Իսահակյանը գրական հոչակի հասավ միանգամից՝ իր առաջին «Երգեր ու վերքեր» բանաստեղծությունների ժողովածուով։ Նրա ժողովրդականությունն անշեղորեն մեծացավ իր կյանքի տարիների հետ, որովհետև նրա հումանիզմը և հայրենասիրությունը գնալով ավելի էին խորանում, ստեղծագործությունը ավելի ու ավելի իմաստուն և գեղարվեստորեն հմայիչ էր դառնում։ Իանաստեղծը հայ գրականությանը պարգևել է գեղարվեստական այնպիսի կոթողներ, որոնք կրում են հանճարի անջնջելի դրոշմը։ Հանդես գալով ազգային ողբերգության ժամանակաշրջանում, Իսահակյանը անսահման հավատով փառաբանեց գալիք լուսավոր օրերը։

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է. Ջրբաշյանը («Իսահակյանի քնարական հերոսը»), բանասիրական գիտությունների դոկտորներ Գ. Հովհաննիսյանը («Պատկերի կառուցվածքը Իսահակյանի բանաստեղծություններում»), Հ. Թամրազյանը («Բանաստեղծը և իր դարը»), պատմական գիտությունների դոկտոր Հ. Ֆելեքյանը («Իսահակյանը հրապարակախոս»), բանասիրական գիտությունների թեկնածուներ Ռ. Իշխանյանը («Իսահակյանի ստեղծագործության լեզվական զարգացումը»), Մ. Ջանփոլադյանը («Ավ. Իսահակյանի «Լիլիթը») և Ավիկ Իսահակյանը («Ավ. Իսահակյանի ծոցատետրային աֆորիզմները»)։

Հ. ԱՍԻՄՈՆՅԱՆ։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՎ ԼԵՀ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1975 թ. հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 2-ը Սուխումի քաղաքում անցկացվեց սովետական և լեհ պատմաբանների հերթական գիտական նստաշրջանը, որը նվիրված էր «Արևելյան Եվրոպայի և Մերձսևծովյան երկրների քաղաքական փոխհարաբերությունները XV դարից մինչև XVIII դարի սկզբները» պրոբլեմին։

Սովետական և լեհ պատմաբանների ամենամյա համատեղ նստաշրջաններ անց են կացվում արդեն շուրջ 10 տարի՝ հաջորդաբար ՍՍՀՄ-ում և Լեհաստանում։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի, Քիշինևի, Երևանի, Վիլնյուսի, Մինսկի, Լվովի, Պարատովի, Թբիլիսիի, Խարկովի, Սուխումիի, ինչպես նաև Վարշավայի, Պոզնանի, Կրակովի և Լոձի յոթանասունից ավելի պատմաբաններ։ Ընթերցվեց 40 զեկուցում։ Նստաշրջանում, պլենար նիստերից բացի, գումարվեցին նաև բաժանմունքների նիս-